



# Սյունյաց երկիր

ՀԻՆՉՆԱԲԹԻ, 31 ՄԱՐՏԻ 2016Թ.  
№ 9 (385)  
www.syuniacyerkir.am

**Դու կարող ես հայի  
մարմինը սանջել,  
բայց նրա հոգու  
հե՛տ ի՛նչ ես  
անելու...**  
ՎԱՐՂԱՆԱՆՑ ԽՈՍՔԸ



Լիանա Ավետիսյան, Մեղրու կենտրոնական գրադարանի տնօրեն

## Գիրքը ե՛րբ կվերագրենի իր նախկին դերը

Մեղրու կենտրոնական գրադարանում տարբեր ցուցադրանքներ կային, բայց մեկն ուշադրություն էր գրավում, առանձնանում մյուսներից՝ «Մոռացված գրքեր»: Այդ բաժնում մեկտեղված գրքերով քչերն են հետաքրքրվում: Գրադարանում փորձում են կրկին ընթերցողի

ուշադրությունը հրավիրել դրանց վրա, քանզի այդ գրքերում մեր ժողովրդի անցած ուղու գեղարվեստական պատմությունն է: «*Թող կարդան եւ իմանան, թե իրենց ծնողները, պապերն եւ տատերը ինչ գրականություն են ընթերցել*», – ասում է գրադարանի տնօրեն Եմմա

Ավետիսյանը: Մեղրու կենտրոնական գրադարանը ներառում է մանկական գրադարանը եւ քաղաքային երեք մասնաճյուղ, գրքային ֆոնդը

էջ 3

## ԱՐՄԵՆ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ.

**«...Իրար նեցուկ լինելով  
հաղթահարենք դժվարությունները,  
մեր երկրին ներված  
մարտահրավերները»**

2013 թվականի սեպտեմբերի 29-ին Աժ պատգամավոր ընտրվելուց հետո առաջին անգամ «Սյունյաց երկիր» թերթի հարցերին պատասխանում է Արմեն Կարապետյանը:

– Պարոն Կարապետյան, մոտ երեք տարի է՝ Ազգային ժողովում եք: Փորձեք ամփոփել երեք տարվա Ձեր պատգամավորական գործունեությունը:

– Ազգային ժողովի մանդատը ստացել են 2013 թվականին: Աժ 5-րդ գումարման պատգամավորը մինչ այդ ուրիշ էր՝ Վահե Հակոբյանը, ինձ ընդամենը մնացել էր չորս տարի ժամանակ: Երեք տարին անցել է, մնացել է

մեկ տարի: Մինչ այդ աշխատել եմ գործադիր մարմնում, տարբեր պաշտոններ վարել: 2013-ի աշնանն առաջին անգամ մտա խորհրդարան: Երեք տարի աշխատանքի փորձ, բնականաբար, չունեի, բայց վերջին տարիներին աշխատանքի բերումով իմ շփումները կառավարության, տարբեր նախարարությունների հետ հնարավորություն էին ընձեռել որոշակի պատկերացում կազմել Աժ պատգամավորի պարտականությունների, իրավունքների, լիազորությունների մասին: Զբաղեցնելով տարբեր պաշտոններ՝ բազմիցս, այլեայլ առիթներով դիմել էի Աժ պատգամավորներին եւ հստակ գիտեի, թե ինչի համար եմ դիմում: Որոշ խնդիրներ էին ծագում, որոնց լուծումն Ազգային ժո-



ղովի պատգամավորի լիազորությունների շրջանակում էր: Դառնալով խորհրդարանի անդամ, որպես տեղական ինքնակառավարման մարմիններում փորձ ունեցող, ցանկություն ունեցա ընդգրկվել տարածքային կառավարման եւ տեղական ինքնակառավարման հարցերի մշտական հանձնաժողովում, ինչը եւ եղավ: Այդպիսով հանձնաժողովի կազմում

էջ 5

## Շահումյանի հնագիտական բացահայտությունը դեռեւս պիտի հասկանալ

### Վնագիտություն

Կապանի Շահումյանի բաց հանքի շահագործման կապակցությամբ 2012թ. տարածքում կատարվել են հնագիտական պեղումներ, որոնք իրականացրել է երկու արշավախումբ: 2012թ. օգոստոսին հետազոտական աշխատանքներ են կատարել Գիանա Միրիջանյանը եւ Տիգրան Ալեքսանյանը, իսկ հետագայում՝ ԳԱԱ հնագիտության եւ ազգագրության ինստիտուտը՝ պատմական գիտությունների թեկնածու, հնագետ Արտակ Գնունու ղեկավարությամբ (անդամներ՝ Գագիկ Խաչատրյան, Անժելա Թադևոսյան, Վիգեն Ծատրյան):

«Հնագիտական հետազոտությունների շնորհիվ պարզվեց, որ մենք գործ ունենք մի բացահայտված հուշարձանախմբի հետ, որի իրական ծավալներն ու բովանդակությունն այսօր տակավին անհայտ են, թեպետ երկու արշավախմբի կողմից մանրազնին ուսումնասիրվել է տարածքը», – նշեց արշավախմբի ղեկավար Արտակ Գնունուն եւ հավելեց, որ հետազոտությունները ծավալվել են հինգ տեղամասում. առաջին երեք տեղամասում ի հայտ են եկել միջնադարյան բավականաչափ մեծ բնակատեղիի մնացորդներ, որ ամենայն հավանականությամբ գոյություն ունեցել մինչեւ 14-րդ դար (բնակատեղին կործանվել է այդ ժամանակաշրջանում):

Հնագետի փոխանցմամբ՝ առաջին տեղամասի գտածոներից կարելի է առանձնացնել մանկական բրոնզե մի սքանչելի ապարանջան, մեծ քանակությամբ միջնադարյան խեցեղեն, ինչպես նաեւ մի մոնումենտալ պատի ավերակներ, ամենայն հավանականությամբ 11-12-րդ դարերի ինչ-որ պարսպաշարի մնացորդ, կացարանների հետքեր:

Երկրորդ տեղամասում բացվել է երկու տիպի հուշարձան. առաջինը, ինչպես բնութագրեց Արտակ Գնունուն, հնագետի երազանքն է՝ աղբանոցը, որտեղ երկու աղբահոր բացվեց: Արդյունքում դուրս բերվեցին մեծ քանակությամբ խեցեղեն անոթներ, այդ թվում՝ տարածամանակյա կարասներ ինչպես 11-12-րդ, այնպես էլ 13-14-րդ դարերին վերագրվող, իսկ երկրորդը՝ առաջին հայացքից սովորական թվացող քարաշար էր, սակայն որի հատվածի հատակը ջրամեկուսիչ նյութից էր կառուցված: Հետագա հետազոտությունները ցույց տվեցին, որ դա միջնադարյան ուղղանկյուն հատակագծով հնձան է եղել: Բացի դրանից՝ այստեղ հայտնաբերվել են նաեւ միջնադարյան մի շարք վառարաններ եւ թոնիղներ, որոնք դրանց կառուցման տեխնիկայի մասին հետաքրքիր նյութ են պարունակում:

Հետաքրքիր է նաեւ այն, որ թե՛ առաջին, թե՛ երկրորդ տեղամասերի հատակներին հայտնաբերվեցին ավելի վաղ ժամանակաշրջանին պատկանող նյութեր. վաղ երկաթեղաբայան (առաջին տեղամասում), մի փոքր ավելի ուշ շրջանի՝ երկրորդ տեղամասում՝ երկրորդ աղբահորի հատակի, այդ թվում՝ կարմիր փայլեցված թասի բեկորներ, որ կարելի է հասակագրել մոտավորապես Զ.ա. առաջին հազարամյակի կեսերով կամ երրորդ քառորդով:

էջ 6

### Քննություն է արարվում պարզելու ժամկետային զինծառայողի մահվան հանգամանքները

ՀՀ քննչական կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչության 9-րդ կայազորային քննչական բաժնում քննություն է տարվում պարզելու ժամկետային զինծառայող Սեւակ Համբարձումյանի մահվան հանգամանքները:

24.03.2016թ.՝ ժամը 09:20-ի սահմաններում, ՀՀ ՊՆ N գործառնախի հրաձգարանում զվխի ճակատային շրջանում ստացած հրազենային վիրավորումով հայտնաբերվել է պարտադիր ժամկետային զինծառայող, շարքային Սեւակ Հովհաննեսի Համբարձումյանը: Ձինծառայողը Կապանի քաղաքային հիվանդանոց տեղափոխվելու ճանապարհին մահացել է:

Դեպքի հանգամանքները պարզելու նպատակով կատարվում են անհետաձգելի քննչական եւ դատավարական գործողություններ:

Քննության արդյունքների մասին տեղեկություն կտրամադրվի լրացուցիչ:

24.03.2016, investigative.am

### Շնորհակալ եմ քեզ, հա՛յ զինվոր

Ձատկի կամ Հիսուս Քրիստոսի հրաշափառ հարության տոնին ընդառաջ Քաջարան քաղաքի N2 միջնակարգ դպրոցի աշակերտներն անակնկալ էին պատրաստել սահմանին ծառայող հայ զինվորի համար: Դպրոցի մուտքի մոտ աշակերտների ոգեւորվածությունն ակնհայտ էր, կարծես թե իրենց պատրաստած անակնկալով ցանկանում էին ուժ, եռանդ, սեր հաղորդել մեր զինվորներին:

Միջոցառումը նախածեռնել էին աշակերտական եւ ծնողական խորհուրդները: Ծնողխորհրդի նախագահ Սիլվարդ Հայրապետյանը, ով եռանդով մասնակցել էր միջոցառման կայացմանը, իր խոսքում նշեց. «Անակնկալ արկղեր ենք ուղարկելու եւ սահմանին կանգնած հայ զինվորին, եւ այն զինվորներին, ովքեր այս դպրոցի շրջանավարտներ են: Թող նրանք էլ զգան, որ իրենց հարազատ դպրոցն իրենցով հպարտանում է»: Մասնագիտական կրթական աջակցության գծով տնօրենի տեղակալ Մարինե Գեւորգյանն ավելացրեց, որ երեխաների եւ ծնողների ոգեւորվածությունն այնքան մեծ էր, որ նույնիսկ դպրոցի հետ կապ չունեցող մարդիկ էին ցանկանում մասնակցել, զինվորներին քաջալերել: Տասնյակից ավելի արկղերի մեջ հիգիենայի պարագաների, գուլպաների, քաղցրավենիքի հետ մեկտեղ աշակերտները դրել էին իրենց սրտի խորքից բխող երկտողեր, բանաստեղծություններ, նամակներ: Թիվ 2 միջնակարգ դպրոցի տնօրեն Սպարտակ Ստեփանյանն էլ ավելացրեց. «Այսօր ունենք կայացած բանակ, որը ոչնչի կարիք չունի: Մենք մեր այս քայլով փորձել ենք ոչ թե օգնել, այլ մեր զինվորներին էլ ավելի բարձր մարտական ոգի հաղորդել»:

ԶԱՐԻՆԵ ՀԱՏԲԱՐՁՈՒՄՅԱՆ

## ԱՂԱՍԻ ՀԱԿՈՒԲՁԱՆՅԱՆ. «Սիսիանում ակնկալում եմ արդար ընտրություններ, չընտրվելու դեպքում կկանգնեմ իսկապես հաղթողի կողքին»

Վերջին տարիներին, հատկապես 2015թ. Սիսիանում բավականաչափ աշխատանքներ կատարվեցին՝ ճանապարհների, բակերի, բազմաբնակարան շենքերի հիմնանորոգում, քաղաքի լուսավորության վերականգնում, աղբահանության պատշաճ կազմակերպում, մարզամշակութային տարբեր միջոցառումների անցկացում եւ այլն: Բացի կատարված աշխատանքների մասին խոսելուց՝ Սիսիանի քաղաքապետ Աղասի Հակոբջանյանի հետ զրուցեցինք նաեւ սիսիանյան նախընտրական տրամադրություններից:

– Պարոն Հակոբջանյան, ինչպիսի՞ն էր 2015թ. Սիսիան քաղաքի համար: Բնակչության համար կենսական ի՞նչ հարցեր լուծվեցին:

– 2015թ. Սիսիանի համար բեկումնային տարի էր կատարված աշխատանքների ծավալի առումով: Ամեն տարվա վերջին քննարկելով բյուջեն՝ ես միշտ հայտարարել եմ, որ սա գոյատևման բյուջե է, եւ լուրջ



ծրագրեր իրականացնելու հնարավորություններ չունենք:

2015թ. բեկումնային եղավ, որովհետեւ պետական միջոցների հաշվին լայնածավալ այնպիսի աշխատանքներ կատարվեցին, որոնց սիսիանցիները վաղուց էին սպասում: Հիմնանորոգվել է Մ2-Շա-

քե-Սիսիան-Դաստակերտ-Ցղունի հանրապետական նշանակության 31.7կմ երկաթուղային ճանապարհի մինչեւ Տոլորս ընկած հատվածը, որը, իհարկե, շարունակություն կունենա: Արդյունքում քաղաքի Արամ Մանուկյան, Իսրայելյան, Սիսական, Գ.Նժդեհ, Չարենց, Շիրվանզադե եւ

## ՀԱՄԼԵՏ ԴՎՎԹՅԱՆ. «Ոչ իրավաչափ եմ համարում Արթուր Գեւորգյանի խափանման միջոցը կալանքն ընտրելը»

Մարտի 8-ին Գորիսի ոստիկանապետի մասնակցությամբ տեղի ունեցած աղմկահարույց միջադեպի վերաբերյալ առավել հավաստի տեղեկատվություն ստանալու համար զրուցեցինք որպես մեղադրյալ կալանավորված եւ «Գորիս» քրեակատարողական հիմնարկում պահվող Արթուր Գեւորգյանի փաստաբան Համլետ Դավթյանի հետ:

– Պարոն Դավթյան, մարտի 8-ին Գորիսի ոստիկանապետ Գեւորգ Ազիզյանի մասնակցությամբ միջադեպի տարբեր մեկնաբանություններ կան, բայց հավաստի տեղեկություններ ենք ուզում իմանալ, եւ առավել հավաստի ինֆորմացիայի աղբյուր ու իրազեկ անձ, քան Դուք եք, որպես այս գործում մեղադրված փաստաբան, կարծում ենք՝ չկա: Ի՞նչ է տեղի ունեցել...

– Այդ ամենն արտացոլված է համացանցում տեղադրված տեսանյութում, տեղի ունեցածի առիթով քրեական գործ է հարուցվել: Նախաքննության գաղտնիության սկզբունքից ելնելով՝ ընդամենը կարող եմ մեկնաբանել տեսանյութում տեղ գտած իրադարձությունները: Կողմնակի դիտորդի համար էլ այն տպավորությունն է ստեղծվում, որ Արթուր Գեւորգյանը տվյալ իրադարձությունների մեջ գոհի դերում է: Եվ այս պահին էլ նա իրեն որպես գոհ



է կարծում, չնայած նրան է մեղադրանք առաջադրված իշխանության ներկայացուցչին դիմադրություն ցույց տալու համար: Տեսանյութից էլ երևում է, որ Արթուր Գեւորգյանն ընդամենը միջամտել է՝ չիմանալով հանդերձ, որ նա ոստիկանության բաժնի պետն է, իր ընկերոջ նկատմամբ բռնություն գործադրողին ուղղակի դիտորդություն է արել... Եվ դրա հետեւանցով ինքն է դարձել հաջորդ գոհը: Արթուր Գեւորգյանին մեղադրանք է առաջադրված ՀՀ քրեական օրենսգրքի 316-րդ հոդվածի առաջին մասով՝ իշխանության ներկայացուցչի օրինական գործողություններին, կապված իր ծառայողական պարտականությունների կատարման հետ, դիմադրություն ցույց տալու, նրա նկատմամբ

կայանքի համար ոչ վտանգավոր բռնություն գործադրելու կապակցությամբ, որ նախատեսված է պատիժ՝ տուգանք նվազագույն աշխատավարձի 300-500-ապատիկի չափով, կալանք մինչեւ մեկ ամիս կամ ազատազրկում մինչեւ հինգ տարի ժամկետով: Եվ մեղադրանքի հետ կապված միջնորդություն է ներկայացվել դատարան: Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանում նրա նկատմամբ որպես խափանման միջոց կիրառվեց կալանավորումը՝ երկու ամիս ժամկետով: Ասեմ նաեւ, որ նշանակված է դատաբժշկական փորձաքննություն, եզրակացությունը դեռեւս մեզ ներկայացված չէ, փորձաքննություն անցկացված է: Տեղյակ եմ, որ Արթուր Գեւորգյանի վրա կան մարմնական վնասվածքի հետքեր, իսկ ոստիկանապետի վրա չկա, միայն վերնաշապիկի կոճակներն են պոկվել եւ կարծես թե պարանոցի ոսկյա շղթան:

– Պարոն Դավթյան, ցանկանում ենք ավելի մանրամասնել, ամսի ութին՝ երեկոյան, ոստիկանապետը գնացել է «Դիանա» ռեստորան, ինքը մենա՞կ էր, թե՞ դատախազն ու քննչական վարչության պետն էլ հետն էին:

– Դատելով մեղադրական նյութերից՝ ոստիկանապետը գործնական հանդիպում պիտի ունենար «Դիանա» ռեստորանային համալի-

Շիրակ փողոցներում հիմնանորոգվել է շուրջ 5կմ երկարությամբ մոտ 5000քմ ճանապարհ՝ կահավորվելով պահանջվող ճանապարհային նշաններով: Ի դեպ, հիանալի այդ ծրագիրը Սերժ Սարգսյանի նախընտրական խոստումներից է: Հաշմանդամության սայլակներով տեղաշարժվող անձանց համար կառուցվել են համապատասխան անցումային մասեր: Մ2-ից Սիսիան ձգվող մյուս ճանապարհի հիմնանորոգումն այս տարի կիրականացվի: Ասֆալտապատվել են նաեւ Գայի 10, 14, Որոտան 1, 2, 3, 4, 5, 6, 7 եւ 8 բազմաբնակարան շենքերի բակային հատվածները՝ շուրջ 4200քմ: Վերականգնվել են Որոտան 1, 2, 3, 4, 5, 6, 7, 8 բազմաբնակարան շենքերի ջրհորդանները: Հիմնովին նորոգվել են Գայի 1, 3, 15, Որոտան 1, 2 եւ 5 բազմաբնակարան շենքերի տանիքները՝ շուրջ 3800քմ մակերեսով: Ի դեպ, տանիքների մի մասը նորոգվել է «Ձանգեզուրի ՊՄԿ» ՓԲԸ-ի միջոցներով, մարզպետ Սուրեն Խաչատրյանի աջակցությամբ, իսկ մի մասը՝ վարչապետ Հովիկ Աբրահամյանի այցելության ժամանակ քա-

րում, ինքը ներկայացել է համալիր, երբ այնտեղ է գտնվել դատախազը, իսկ քննչական վարչության պետը երևում է տեսանյութի մեջ:

– Մի քիչ տարօրինակ չէ՞ այսքան վիճելի հարցերի առկայության պարագայում որպես խափանման միջոց կալանքն ընտրելը:

– Խափանման միջոցը կալանքն ընտրելը տարօրինակ է այնքանով, որ նույնիսկ եթե հաստատված էլ համարվի հանցանքը, նախատեսվում է նաեւ այլ տեսակի պատժամիջոց, բացի ազատազրկումը մինչեւ հինգ տարի ժամկետով, նաեւ կալանքի ու տուգանքի ձեւով: Եվ ասեմ՝ միջազգային ատյանների՝ Եվրոխորհրդի, նաեւ Նախարարների կոմիտեի հանձնարարական կա, ուղղակի ցուցում կա ազգային դատարաններին, որ խափանման միջոցն ընտրելիս հաշվի առնվի մեղադրվող արարքի համար նախատեսված նվազագույն պատժաչափը, այսինքն՝ եթե նվազագույն պատժաչափն էական է, կարող է եւ կիրառվել կալանքի միջոցով խափանման միջոցը: Այս դեպքում նվազագույն պատժատեսակը տուգանքի ձեւով է: Կա նաեւ մեղմ մի այլ պատժատեսակ՝ կալանքի ձեւով մինչեւ մեկ ամիս ժամկետով: Եվ այս դեպքում, կարեւորություն չտրվեց նշված հանգամանքներին ու կիրառվեց կալանքի ձեւով խափանման միջոցը:

– Այսինքն՝ պատժամիջոցը ոչ իրավաչափ էր:

– Այո, կարծում եմ, որ իրավաչափ չէր դատարանի նման որոշումը, ինչից ելնելով բողոքարկել ենք Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի որոշումը: Վերաքննիչ բողոքը կլսվի մարտի 25-ին ժամը 12-ին:

– Իսկ որպեսզի արդարություն ապահովվի, ժամանակավորապես դադարեցվել են



# ԱՂԱՍԻ ՀԱԿՈՒԲՋԱՆՅԱՆ. «Սիսիանում ակնկալում են արդար ընտրություններ, չընտրվելու դեպքում կկանգնեմ իսկապես հաղթողի կողքին»

Եջ 3

րով: **– Ի՞նչ ընթացքի մեջ են Սիսիանի ներքին ջրատար ցանցի հիմնանորոգման աշխատանքները:**

– Հիմնանորոգման աշխատանքներ են իրականացվում Որոտանի ձախափնյա հատվածում: Խառնուրդի փոխարինումը ջրատար ցանցը փոխելու աշխատանքներն ավարտվել են, Իսրայել Օրի փողոցից ընթացքի մեջ են: Դեռևս կատարողական ակտ չի ստորագրվել: Ներքին ջրատար ցանցը համայնքային հաշվեկշիռն չի հանձնվել, որից հետո ավագանին որոշում կկայացնի հետագա շահագործման համար: Բայց քաղաքի ներքին ջրատար ցանցի սպասարկումը 15 տարով «Հայջրնուղկոյուղի» ՓԲԸ-ին հանձնելու ավագանու որոշում է կայացվել: Ընկերության հետ համագործակցության շնորհիվ 2015թ. վերականգնվել են թիվ 3, 4 նախակրթարանների, Որոտան 2 եւ 4 բազմաբնակարան շենքերի կոյուղագծերը: 2016թ. դեռևս չգիտենք, թե ինչ ծրագրեր կկազմվեն: Մինչդեռ ընկերության պարտականությունն է ոչ միայն ջրամատակարարում իրականացնելը, այլև կոյուղու աշխատանքների կազմակերպումը, որ քաղաքում բավականին լուրջ խնդիրներ է առաջացնում: Կոյուղին մտնում է Որոտան գետը. քաղաքի ներքին կոյուղու վիճակի մասին եզրակացություն պետք է տան համապատասխան մասնագետները: Համախառն են կետաշրջները թափվում քաղաքի փողոցներ: «Հայջրնուղկոյուղի»-ն պետք է մինչև բնակարանի հաշվի իրականացման սպասարկում: չէ՞ որ մասնավոր սեկտորում մինչև հաշվի սպասարկումն ընկերությունն է կատարում: Ընկերությունը պատասխանատվություն պետք է կրի թե՛ ջրամատակարարման, թե՛ կոյուղու հետ կապված բոլոր աշխատանքների համար: չէ՞ որ բնակիչը վճարում է նաև ջրահեռացման համար: Կարծում են՝ ընկերության հետ հարաբերություններում շատ հարցեր վերանայման կարիք ունեն:

**– Սիսիանում 84 բազմաբնակարան շենք կա, բնակամաբար, բնակարանային կոմունալ տնտեսություն ունեք, իսկ համատիրություններ չեք ստեղծել, ինչո՞ւ:**

– Այլ քաղաքների փորձը հաշվի առնելով՝ համատիրություններ ստեղծելու անհրաժեշտություն չենք ունեցել: Իմ կարծիքով՝ համատիրությունների ինստիտուտը չի կայացել, վճարներից գոյացած գումարը հազիվ նրանց ծախսերն է փակում: Իսկ բնակարանային կոմունալ տնտեսության նորանշանակ տնօրեն Կարեն Հովհաննիսյանը բարձր մակարդակով է կատարում իր պարտականությունները:

**– Ի դեպ, քաղաքի կենտրոնում մաքրությունն աչք է շոյում, եւ տեսանելի է բարեխիղճ աշխատանքի արդյունքը: Բայց մեզ հետաքրքրում է նաև Որոտան գետի ջրային հայելիների պահպանման վիճակը:**

– Ջրային հայելիների աղտոտվածությունը, ըստ մասնագիտական եզրակացության, պայմանավորված

է ջրի հոսքի պակասությամբ: Հորդառատ անձրևների բերած տիղմը գալիս անցնում է, իսկ այստեղ ջրի հոսքի պակասության պատճառով առաջանում են ջրիմուռներ, մոծակներ են հայտնվում, եւ ստեղծվում է այլ միջավայր: Իմ գործունեության տարիներին մեկ անգամ հիմնովին մաքրեցինք, բայց դա կրկնվող գործընթաց է, ջրի սանիտարական հոսքը չի ապահովվում, եւ ստեղծվում է այդ վիճակը: Կարծում են՝ այս հարցին պետք է պետական մոտեցում ցուցաբերվի:

**– Տարածված կարծիք կա, որ Սիսիանում ոչ համերաշխ վիճակ է, հասարակությունը բաժանվել է տարբեր բեռնների: Միգրացիա սաչափազանցություն է:**

– Եթե ձեր մատնանշած ոչ համերաշխ վիճակը պայմանավորված է ինձնով, դա ճիշտ չէ: Սիսիանի բնակիչներն իմ մտերիմներն են. եթե կան հզոր անհատներ, համագործակցում են ինչպես նրանց, այնպես էլ քաղաքում գործող քաղաքական բոլոր ուժերի հետ՝ ի շահ մեր համայնքի զարգացման: Կան նոր կայացող անհատներ, ուրիշի հետ հույս կապողներ, ովքեր փորձում են ցույց տալ իրենց ով լինելը՝ խաթարելով քաղաքի ամրորը: Ինչ վերաբերում է բազմակարծությանը, սպա այն ավելի շատ նպաստում է իմ գործունեությանը կատարելագործմանը, բացթողումների շտկմանը: Եթե կա առողջ քննադատություն, եւ ողջունում են, այն ինձ օգնում է, իսկ եթե կան «բզկտողներ», եւ դրանք հաշվի չեն առնում:

**– Ինչպիսի՞ն է Սիսիանի ժողովրդագրական վիճակը:**

– Ամսական մեկ անգամ հաշվետվություն են ներկայացնում ծնունդների եւ մահերի, մեկնողների եւ վերադարձողների, ամուսնությունների եւ ամուսնալուծությունների վերաբերյալ: Վերջին ութ տարվա ընթացքում ծնունդ-մահ հարաբերակցությունը կայուն է, տարբերությունը գոհացուցիչ չէ, բայց նահանջ էլ չի արձանագրվել: 2015թ. Սիսիանում գրանցվել է 140 ծնունդ, որից 139-ը՝ կենդանի ծնունդ, 109 մահ, 73 ամուսնություն, 21 ամուսնալուծություն: 2015թ. համայնքից մեկնել է 175 հոգի, որից երեւան՝ 42, ՀՀ այլ բնակավայրեր՝ 9, ԼՂՀ՝ 1, արտերկիր՝ 123, իսկ մշտական բնակության նպատակով համայնք է տեղափոխվել 108 մարդ, որից՝ երեւանից՝ 7, ՀՀ այլ բնակավայրերից՝ 2, ԼՂՀ-ից՝ 2, արտերկրից՝ 97: Իհարկե, մեկնելու պատճառն աշխատանքի բացակայությունն է, բայց, իմ կարծիքով, այն աշխատանքը, որ կատարում են այլ վայրում, դրա 50%-ը կատարեն հայրենիքում, մեր երկրի վիճակն ավելի լավ կլինի:

**– Քաղաքացիների ընդունելության ժամանակ ավելի շատ ի՞նչ հարցերով են դիմում:**

– Քաղաքացիների հիմնական պահանջն աշխատանքի տեղավորումն ու նյութական օգնություն խնդրելն է: Խնդիրն այն է, որ ՏԻՄ համակարգում վերջին տարիներին կատարված փոփոխությունների հետեւանքով հստակ սահմանվում են տվյալ հաստիք զբաղեցնելու հա-

մար աշխատանքային պահանջները: Եթե նախկինում մեկ հաստիքը հնարավոր էր բաժանել մի քանի հոգու մեջ, այսօր դա հնարավոր չէ: Այսօր ունենք իրավաբանի, ճարտարապետի թափուր տեղ, որ չենք կարողանում գտնել համապատասխան մասնագետ: Աշխատանքի դիմողների համար խնդիր է նաեւ համայնքային ծառայողի ցածր աշխատավարձը: Ինչ վերաբերում է երիտասարդ կադրերի մայրաքաղաքից չվերադառնալուն, ապա, իմ կարծիքով, այսօր այդ հարցը մտահոգիչ է ոչ միայն Սիսիանում, այլեւ ՀՀ այլ բնակավայրերում:

**– Նախադպրոցական ուսումնական հաստատություններում ի՞նչ խնդիրներ կան:**

– Համայնքում գործում է չորս մանկապարտեզ, որոնք նորոգման խնդիրներ ունեն: Հիմնովին ջերմամեկուսացվել է N4 նախադպրոցական ուսումնական հաստատության շենքը, փոխվել են բոլոր արտաքին դռներն ու պատուհանները: Վերանորոգվել է N1 ՆՈՒՀ-ի մեկ խմբասենյակ: Վերանորոգվել են N3 եւ N4 ՆՈՒՀ-երի արտաքին ջրագծերը եւ կոյուղագծերը: Թարմացվել է բոլոր հաստատությունների համակարգչային տեխնիկան: Կրկնապատկվել է նախադպրոցական հիմնարկների երեխաներին տրվող սննդի չափաբաժինը՝ այն համապատասխանեցնելով նորմատիվային պահանջներին: 2015թ. նախադպրոցական ուսումնական հաստատություն է համախել 437 երեխա: Բայց ամենամատակարար հարցն այսօր նոր մանկապարտեզ ունենալն է: Մանկապարտեզ համախելու համար դիմած մոտ 100 երեխայի չենք կարողանում ընդունել, որովհետեւ գոյություն ունեն չափորոշիչներ՝ համաձայն որոնց՝ խմբասենյակներում հստակ սահմանված թվաքանակից ավելի երեխա չի կարող լինել: Մասնագիտական կադրերի առումով խնդիր չունենք. իմ դեպքավորման յոթ եւ ավելի տարիների ընթացքում այդ հաստատությունները հնարավորինս համալրվել են երիտասարդ կադրերով: 2008թ. երբ առաջին անգամ ընտրվեցի քաղաքապետ, մանկապարտեզում թունավորման դեպքը կարծես զգոնության դաս եղավ: Մանկապարտեզների սաների դաստիարակությունից մինչև սանիտարահիգիենիկ վիճակի վերահսկողությունն իմ ամենօրյա աշխատանքային պարտականություններից են:

**– 2014թ. Սիսիանը հռչակվեց հանրապետության երիտասարդական մայրաքաղաք: Արդյո՞ք որեւէ առումով այն նպաստեց քաղաքի զարգացմանը:**

– Մարզաշահարկային կենտրոններ, երիտասարդական միջոցառումների կազմակերպում, հյուրանոցային պայմաններ, երիտասարդական ժամանցային օբյեկտների գների մատչելիություն եւ մի շարք այլ պայմաններ հաշվի առնելով՝ առցանց քվեարկության եւ անկախ փորձագետների գնահատման արդյունքներով 2014թ. Սիսիանը հռչակվեց երիտասարդական մայրաքաղաք: Սա ենթադրում էր կառավարության կողմից բյուջետային հատկացում-

ներ, երիտասարդական ծրագրերով նախատեսված բազմաթիվ միջոցառումների կազմակերպում եւ իրականացում տվյալ քաղաքում՝ ողջ տարվա կտրվածքով, ինչն էլ իր հերթին ենթադրում էր ֆինանսական հոսքեր՝ մայրաքաղաքից դեպի մարզեր: Մենք կարծում էինք, որ Սիսիանը կլինի կառավարության ու շաղկապային կենտրոնում, կիրականացվեն տարբեր ծրագրեր, կլուծվեն համայնքային որոշ խնդիրներ: Բայց սպասելիքներն այլ էին, իրականությունը՝ այլ: Ընդհանուր առմամբ ստեղծեցինք երիտասարդական այգի: Սի խոսքով՝ հաջորդ անգամ մասնատիպ միջոցառման, եթե ես քաղաքապետ լինեմ, չենք մասնակցի:

**– Սիսիանը մարզաշահարկային առումով նաեւ ավանդույթներ ունեցող քաղաք է:**

– Սիսիանի «բրեյդներից» է կանցնել վոլեյբոլի թիմը, որ անցած տարի մույնպես հաջողություններ արձանագրեց: Համահայկական 6-րդ ամառային խաղերին լողափնյա վոլեյբոլի թիմը գրավեց 1-ին, դասական վոլեյբոլի թիմը՝ 3-րդ տեղը: Արվեստի դպրոցի սաները սպորտային պարերի գծով գրավեցին 2-րդ եւ 3-րդ տեղեր: 2011թ. հիմնվել է ֆուտբոլի դպրոց, որտեղ այժմ համախել է 45 սան: 2015թ. Հայաստանի 15 տարեկանների պատանիների առաջնությունում մեր ֆուտբոլի թիմը գրավեց 3-րդ տեղը: Ի դեպ, մարզախմայրիկ կառուցումով հնարավոր է միավորեցնել քաղաքում գործող մարզական դպրոցները: Երաժշտական դպրոցի 11 սան արժանացել է մարզային, հանրապետական եւ միջազգային մրցույթ-փառատոների դիպլոմների եւ պատվոգրերի: Տարբեր մրցույթների մասնակցելով՝ մեծ հաջողություններ են գրանցում Սուսաննա Հունանյանը եւ Նարինե Իսկանդարյանը: Մշակութային միջոցառումներից ավանդական է դարձել ամեն տարվա օգոստոսի 12-ին երիտասարդության միջազգային օրը նշելը, որ համախմբում է երիտասարդներին, հաճելի պահեր պարզեցնում միջոցառման մասնակիցներին: Անցյալ տարի մարզի սահմանափակ կարողություններով մարդկանց «Խարիսխ» հի-ի հետ համատեղ կազմակերպել ենք Օտար կի հանրապետական տոն, որ միտում ունենք ավանդույթ դարձնելու:

**– Նշեք քույր քաղաքների հետ համագործակցության հիմնական դրսեւորումները:**

– Քույր քաղաքների հետ համագործակցությունը, նախաձեռնաք, ունի ճանաչողական, մեր մշակույթն այդ երկրներում ներկայացնելու բնույթ, որ հատկապես երիտասարդների համար շատ կարեւոր է: Իհարկե, համագործակցության արդյունքում իրականություն են դառնում նաեւ որոշակի ծրագրեր: 2008թ. երբ ընտրվեցի Սիսիանի քաղաքապետ, Հունաստանի Նեա Ջմինի քաղաքի հետ բարեկամական հարաբերություններ էին հաստատվել, եւ ես շարունակեցի համագործակցությունը: Համո Սահյանի մշակույթի տան վերանորոգումից հետո Նեա Ջմինիից ուղարկեցին ձայնային սարքավորումներ:

Նախկին քաղաքապետ Լավրենտ Սարգսյանի օրոք 150 հազար եվրո արժողությամբ համակարգչային տեխնիկա եւ դպրոցական գույք էր ուղարկվել Սիսիան: Ֆրանսիայի Մոնտելիմար քաղաքից եկած պատվիրակությունը, հաշվի առնելով որոշակի պայմաններ, ՀՀ մի քանի քաղաքներից նախընտրեց Սիսիանի հետ կնքել քույր քաղաքներ դառնալու պայմանագիր: 2015թ. համայնքի հինգ երեխա մեկնեց Մոնտելիմար, մինչ այդ նրանց պատվիրակությունն էր այցելել Սիսիան. նրանց համար կազմակերպել էինք ճանաչողական էքսկուրսիա ՀՀ եւ ԼՂՀ տեսարժան վայրերով: Ֆրանսիայից մեր բժշկական կենտրոն են ուղարկել մամոգրաֆիկ սարքավորում, որը, սակայն, դեռեւս չի գործածվում: Փորձում ենք համագործակցել նաեւ Գերմանիայի Ռավենսբուրգ քաղաքի հետ, հավանաբար սեպտեմբերին կստորագրվի քույր քաղաքներ հռչակելու պայմանագիրը: Անցյալ տարի չորս երիտասարդ Ռավենսբուրգում մասնակցել է «Եվրոպայի գույները» միջազգային գիտաժողովին:

**– Վերջին տարիներին Գորիսի ենթաշրջանում զբոսաշրջության զարգացման շնորհիվ տարբեր ենթակառուցվածքային ստեղծվեցին: Ինչպիսի՞ն է այդ առումով Սիսիանում պատկերը. չէ՞ որ այն Տաթևից այնքան էլ հեռու չէ:**

– Այն սպասելիքները, որոնք ունեինք զբոսաշրջության ակտիվացման հետ կապված, դեռեւս չեն արդարացել: Հայի բնավորություն է, եթե Տաթև են մեկնում, ապա ամառային պիտի օբյեկտներն այնտեղ կամ մերձակա գյուղերում, այնինչ դա ամենեւին էլ պարտադիր չէ: Սիսիանում առայժմ զբոսաշրջության զարգացման հետ կապված տարբեր ենթակառուցվածքային ստեղծելու շարժն ինձ չի գոհացնում:

**– 2016թ. ՏԻՄ ընտրությունների տարի է: Աղասի Հակոբջանյանը պատրաստվում է առաջադրվել քաղաքապետի թեկնածու:**

– Թեկնածությունն առաջադրելու են, եւ սա ոչ միայն իմ, այլև աշխատակազմի, համակիրներիս ընդհանուր որոշումն է: Եթե գալիս, որ այս կառույցում անելիք չունեն, թեկնածությունն չեն առաջադրի: Կարծում են՝ այդ հարցում ես բարոյական իրավունք են վաստակել, եւ հաշվի առնելով նաեւ սիսիանցիների՝ իմ հանդեպ ունեցած բարյացակամ վերաբերմունքը՝ վստահ եմ, ձայների մեծամասնությամբ կրկին կընտրվեմ Սիսիանի քաղաքապետ: Ես եկել եմ ծառայելու իմ ժողովրդին ու բավականին աշխատանք են կատարել այս տարիների ընթացքում: Եթե ոչինչ չեն արել, ուրեմն չպիտի հաղթեն գալիք ընտրություններում:

**– Ձեզ չի՞ մտահոգում այն փաստը, որ իշխող կուսակցությունը նույնպես կառաջադրի իր թեկնածուն:**

– Առանց մրցակցության ընտրությունն ես ընտրություն չեմ համարում: Սիսիանում ակնկալում են արդար ընտրություններ, եւ չընտրվելու դեպքում կկանգնեմ իսկապես հաղթողի կողքին: Ժողովուրդը պիտի հաշվի առնի, թե թեկնածուներից ով ինչ է արել քաղաքի համար եւ ինչ կարող է անել:

**– Ձեր կողմ սիսիանցիներից:**

– Ինչքան էլ շրջանավոր խոսակցություններ լինեն, միեւնույն է, դուք եք ընտրում ձեր քաղաքապետին: Իսկ ապագա մրցակիցներին ասեմ, որ իրենց բարոյական իրավունքն է ընտրարշավին մասնակցելը: Միաժամանակ, ինչպես նշեցի, ակնկալում եմ քաղաքակիրք, կոռեկտ ընտրաքաղաքար: Եվ, իհարկե, ապավինեմք մեր ժողովրդի քվեարկությանը, ոչ թե այլ ուղիներ փնտրեմք:

**Հարցազրույցը՝ ԱՂԱՍԻ ՀԱԿՈՒԲՋԱՆՅԱՆԻ**

# ԱՐՄԵՆ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ.

## «...Իրար Նեցուկ Լինելով հաղթահարենք դժվարությունները, մեր երկրին Ներված մարտահրավերները»

1 սկսեցի մասնակցել օրենսդրական աշխատանքին՝ որքանով կարող էի, ավելի ստույգ՝ ուժերիս ներածին չափով: Նաև Հանրապետական կուսակցության խմբակցության կողմից ընտրվեցի ժամանակավոր հաշվիչ հանձնաժողովի անդամ:

Կան ընկերության գործունեության արդյունքում գոյացած եւ գոյացող արտադրական լցակույտերի մշակման ներդրումային ծրագրի մասին» ՀՀ օրենքում:

– **Քանի որ մեծամասնական ընտրակարգով եք ընտրվել, կուզեի՞նք իմանալ ընտրողների հետ Ձեր շփումների մասին: Վերջին անգամ ե՞րբ եք եղել Կապանի գյուղերում կամ Մեղրիում, հանդիպել ընտրողներին:**

– Քառօրյա միստերից հետո սովորաբար Կապան եմ վերադառնում: Ճիշտ է, ազատ ժամանակ քիչ եմ ունենում, մանավանդ որ ՀՀ խմբակցությունում էլ միստեր եմ գումարվում եւ այլ: Հիմնականում մայրաքաղաքում լինելը բացասաբար է անդրադառնում ընտրատարածքի բնակավայրերում, կոլեկտիվներում հանդիպումների հաճախականության վրա: Եվ, այդուամենայնիվ, ձգտում եմ մասնակցել տարբեր տեսակի միջոցառումների, որոնց ժամանակ էլ, որպես պատգամավորի, ինձ հարցեր են ուղղում: Բացի այդ, տեղերից ընտրողների բազմաթիվ նամակներ եմ ստանում... Ազգային ժողովում ինձ հղած նամակների մեծ մասը վերաբերում է առողջապահական խնդիրներին, երբ մարզում, օրինակ, տվյալ վիրահատությունը հնարավոր չէ իրականացնել կամ հիվանդի հետագա բուժումը պիտի իրականացվի մայրաքաղաքի կլինիկաներում: Ձգտում եմք անել այնպես, որ բուժումը 50 տոկոս զեղչով արվի կամ մտցվի պետպատվերի շրջանակի մեջ, եթե հնարավոր է լինում:

– **Պարոն Կարապետյան, նախընտրական փուլը մի բան է, պատգամավորական պրակտիկ գործունեությունը՝ մեկ այլ բան: Յուրաքանչյուրի դեպքում է այդպես. նախ՝ խոստումներ են տալիս, հետո՝ հայտնվում այլ իրականության մեջ: Եթե համեմատում եք Ձեր նախընտրական խոստումները եւ կատարածը, որքանով շփման եզրեր ունեն: Ինչ-որ բան ստացվե՞լ է, թե՞ անհնարին է մեր օրերում խոստումը կատարել:**

– Գիտե՞ք ինչ, կյանքը չափազանց արագ է զարգանում, եւ այնքան փոփոխություններ են կատարվում, որ ոչ մեկը ժամանակից շուտ չի կարող կանխատեսել, թե ինչ է կատարվելու ապագայում: Այո, խոստումներ տվել եմ եւ ոչ միայն ես, այլ պատգամավորի բոլոր թեկնածուները: Եվ այնպես չէ, որ խոստացածս չեն կատարել կամ չեն ուզում իրականություն դարձնել... Անընդհատ հնարավորության սահմաններն են ներկայումս: Խոստումներ եղել են, մի մասը կատարվել է, շատ-շատերի կատարման հնարավորությունը, ցավոք, չկա, սպասում եմք ապագայի զարգացումներին, տնտեսական կացության բարելավմանը:

– **Լուրեր են շրջանառվում, որ պատրաստվում եք առաջադրվել Կապանի քաղաքապետի թեկնածու այս տարվա աշնանը կայանալիք ՏԻՄ ընտրություններում:**

– **Որքանով եմ հավաստի այդ խոսակցությունները:**

– Նման խոսակցություններ, իրոք, կան. կապանցիներն ինձ էլ հարցնում են, թե հնարավոր է առաջիկա ընտրության ժամանակ առաջադրեմ իմ թեկնածությունը: Շատերն էլ կոչ են անում անպայման առաջադրվել... Բայց նման խնդիր իմ մեջ չի ծագել, դրա անհրաժեշտությունը նույնիսկ չեմ քննարկել: Անկեղծ ասած՝ չկա այդպիսի մտադրություն: Պարզապես ունամք այդպես եմ մտածում կամ անկեղծորեն կամենում: Մեր օրերում այնքան էլ դյուրին չէ լինել համայնքի ղեկավար: Պարտականություններ կան պիտի կատարես, պիտի ծառայես Կապանի բնակչությանը: Իհարկե, կարելի է եւ զբաղեցնել քաղաքապետի աթոռը եւ ոչինչ չանել կամ ինչ-որ երեսնականություն ստեղծել, բայց դա բարոյական չէ: Իմ պարագայում՝ ընտանեկան ծանրաբեռնվածությունն էլ թույլ չի տա, որ ամբողջովին ու անմնացորդ լծվեմ քաղաքապետի պարտականություններին:

– **Քանի որ ԱԺ-ում տարածքային կառավարման եւ տեղական ինքնակառավարման հարցերի հանձնաժողովի անդամ եք, ինչպե՞ս եք գնահատում Կապան քաղաքի այսօրվա վիճակը, մանավանդ որ ժամանակին ղեկավարել եք այդ համայնքը:**

– Հիմնականում Կապանն առանձնացնելու նույն վիճակն է բոլոր համայնքներում, որովհետեւ հնարավորությունները սուղ են ինչ-որ հիմնախնդիրներ լուծելու համար (հատկապես այս ժամանակահատվածում): Միեւնույն ժամանակ՝ Կապան քաղաքի առանձնահատկությունները բավականին շատ են, որովհետեւ մեր ժողովուրդը ներգրավված է արդյունաբերության մեջ, գյուղատնտեսությունը թույլ է զարգացած, աշխատատեղերի քանակը՝ սահմանափակ, գործազրկությունը՝ բավականին մեծ: Իրոք հիմնախնդիրների լուծումը նման պայմանների է հնարավորությունների սահմաններում չափազանց դժվար է, եթե չասենք՝ անհնարին: Պետք է ավելի սերտացնել կապերը կառավարության, միջազգային դոնոր կազմակերպությունների, եվրոպական կառույցների հետ: Եվրասիական տնտեսական միության մեջ եմք մտել, այնտեղ պիտի գործընկերներ փնտրել, Իրանի Իսլամական Հանրապետությունից հանել եւ տնտեսական պատժամիջոցները, զուցե այս խողովակի օգտագործման հնարներն էլ պիտի փնտրել: Այո, ինձ շատ դժվար է աշխատելը, բայց պիտի պայքարել, պիտի ձգտել...

– **Դուք երբեք հրապարակավ չեք ամփոփել Կապանի քաղաքապետի պաշտոնում մոտ ութ տարվա Ձեր գործունեությունը: Տարիների հեռվից կարո՞ղ եք ասել, թե որն էր Ձեր գործունեության գլխավոր արդյունքը, ի՞նչ հետք թողեցիք Կապանում:**

– Նախ՝ չեմ սիրում, երբ որեւէ պաշտոնյա իրեն մի գործ է վերագրում, որեւէ բան է պայմանավորում իր անձով կամ առավել եւս ինքնագովազդով զբաղվում: Բայց երբ մարդ կոլեկտիվի հետ ճիշտ ու արդյունավետ է աշխատում, որեւէ հաջողության է հասնում: Իմ պաշտոնավարման ութ տարին, հաշվի առնելով նաեւ ժամանակի դժվարությունները, արդյունավետ է եղել Կապանի համար: Ուշագրավ հաջողություն եմ համարում այն, որ կարողացանք ստեղծել քաղաքի գլխավոր հատակագիծը: Դա շատ լուրջ եւ աշխատատար խնդիր էր: Դեռես Խորհրդային Միության տարիներին շատ-շատ են պայքարել գլխավոր հատակագիծ ունենալու համար, չի ստացվել: Ութ նախարարության հետ աշխատել ենք: Չորս տարի է

տեւել աշխատանքը: Այսօր հպարտ եմ նրանով, որ քաղաքապետարանի իմ կոլեկտիվը հասել է դրան:

– **Իհարկե, մեք էլ ենք ընդունում՝ կարելու գործ եք ավարտին հասցրել, բայց ինքներդ էլ տեսնում եք, որ այդ հատակագծից հետո Կապանի ճարտարապետական դեմքը սկսեց առավել մեծ քայլերով աղավաղվել եւ շարունակվում է:**

– Համամիտ չեմ Ձեր ասածին: Եթե ինչ-որ տեղ հողահատկացում ճիշտ չի կատարվում, շինարարական թույլտվությունները ճիշտ չեն արվում, դա գլխավոր հատակագծի թերությունը չէ: Հատակագծով պարզ, հստակ որոշված է՝ որտեղ ինչ կարող ես անել, ավտոտնակ կարելի՞ է, թե՞ չի կարելի, բնակելի չենք կարելի՞ է, թե՞ ոչ: Հատակագծում հստակ նշված են, թե որտեղ պիտի կառուցվեն բնակելիները, սննդի օբյեկտները, խաղահրապարակները... Եթե ինչ-որ չնախատեսված տեղում աշխատանք է կատարվել, ուրեմն քանդում ենք սկսել:

– **Իսկ ՀՀԿ խորհրդում արդեն որոշե՞լ են, թե ով է լինելու կուսակցության թեկնածու Կապանի քաղաքապետի ընտրության ժամանակ, թե՞ նման բան առայժմ չկա:**

– Նման որոշումներ ՀՀԿ-ի խորհուրդը չի կայացրել: Եվ ավելացնեմ, որ ՀՀԿ խորհուրդն այնքան էլ տրամադրված չէ դա վերցնել իր ուսերին, այլ հակված է նրան, որ խնդիրը քննարկվի ներքին օղակներում: ՀՀԿ-ի Կապանի տարածքային կառույցը կարող է նման որոշում կայացնել, թե ով է ավելի արժանի թեկնածու առաջիկա ՏԻՄ ընտրություններում: Նաեւ ասեմ, որ հանրապետության նախագահը, որքանով տեղյակ եմ, հակված չէ նման հարցերով զբաղվել: Այդպիսի խոսքեր են, չէ՞, շրջանառվում, կնեռեք արտահայտությանս, թե նախագահը «դաբրո» է տվել այսինչ թեկնածուին: Չկա նման բան, ամենայն անկեղծությամբ եմ ասում: Այսպիսի մի խնդիր էլ կա. եթե մարդ համառ է, պատրաստ է եւ ունի կայուն ընտրական վճարելու համար, որով կարող է արդյունքի հասնել, կարող է շրջանցել կուսակցության դիրքորոշումը եւ առաջադրել իր թեկնածությունը:

– **Մեր գոյույց տեղափոխենք մի այլ ոլորտ: Հայաստանում բուռն բանավեճեր են ընթանում Ընտրական օրենսգրքի նախագծի շուրջ: Մի քանի սկզբունքային հարցերի վերաբերյալ հասարակական անհամաձայնություն կա: Կուզե՞նայինք իմանալ՝ նախ՝ Դուք այդ հարցերի առնչությամբ հանդիպումներ ունեցե՞լ եք Ձեր ընտրողների հետ՝ իմանալու նրանց կարծիքը, թե՞ կրկնում եք կուսակցության դիրքորոշումը:**

– Բնական է, որ սահմանադրական փոփոխություններին պիտի հաջորդեն Ընտրական նոր օրենսգրքի ընդունումը: Իսկ դրա մշակումը բավականին լուրջ խնդիր է, որովհետեւ նորացված սահմանադրության մեջ միանգամայն նոր դրույթներ են ամրագրված: Ներկայումս, ինչպես գիտեք, Ընտրական օրենսգրքի նախագծի շուրջ հիմնավոր քննարկումներ են ընթանում: Շահագրգիռ անձինք, քաղաքական ուժերը, հասարակական կազմակերպությունները, ըստ իս, ակտիվ մասնակցություն են ունենում օրենսգրքի մշակմանը: Այդ հնարավորությունը նրանց ընձեռնվել է:

– **Բայց արդեն վիճելի հարցեր են առաջացել, որոնց վերաբերյալ ցանկանում ենք իմանալ մեր ընտրյալի՝ Արմեն Կարապետյանի կարծիքը: Օրինակ, ընտրացուցակների հարցը, որ կասկածի տեղիք է տվել յուրաքանչյուր ընտրության ժամանակ:**

– Կարծիքս այն է, որ ամեն ինչ

կատարվի միջազգային օրենքների սահմաններում, սահմանադրության շրջանակներում, չխախտվեն մարդու իրավունքները, ընտրության գնալիս մարդ համոզված լինի, որ տեղ է կանգնելու իր ձայնին: Կողմ եմ այն բանին, որ Ընտրական օրենսգրքի նախագծի շուրջ ծագած ամեն մի տարակուսանք փարատվի, ընդ որում՝ դրան կողմ է ՀՀԿ խմբակցությունը՝ նախագահից սկսած պատգամավորներով վերջացրած:

– **Այսինքն՝ Դուք դեմ չե՞ք, որ ընտրություններից հետո ստորագրված ցուցակները հրապարակվեն:**

– Իհարկե, դեմ չեմ, եթե դրանով, ըստ սահմանադրության եւ միջազգային իրավական ակտերի, չեն խախտվում մարդու իրավունքները: Ի դեպ, որպես պատգամավոր կապանցիների մեջ չեմ, տեսնում եք՝ ՀՀԿ խմբակցության պատգամավորները շատ ազատ են, եւ տեսեք, թե ընտրական օրենսգրքին առնչվող որքան հարցեր են բարձրացնում: Ընտրական օրենսգրքը այնպես պետք է մշակվի, որ ընտրողի մեջ որեւէ կասկած չլինի: Ինձ թվում է, որ բավականին ժամանակ կա աշխատելու, քննարկելու եւ Ընտրական օրենսգրքը վերջնական տեսքի բերելու համար:

– **Երեք տարի է, ինչ ԱԺ պատգամավոր եք, առաջին անգամ եք հանդես գալիս մեր թերթում: Դատելով դրանից՝ կարող է տպավորություն ստեղծվել, որ թափանցիկ աշխատելու հարցում վերապահում ունեք:**

– Միշտ կարելու է եմ լրատվամիջոցների հետ շփումը, հավանաբար մայրաքաղաքում իմ աշխատանքը եւ հեռավորությունն է պատճառը, որ սերտ չի եղել կապը տեղական լրատվամիջոցների հետ: Կուզեի՞ ասեմ ինչի հետ մեկտեղ լրատվամիջոցները նաեւ հույս սերմանեին վարվա օրվա հանդեպ: Ի վերջո անհույս արելն էլ մի բան չէ, ստեղծված սոցիալ-տնտեսական վատթար վիճակի համար մեղքի բաժին ունի մեզնից յուրաքանչյուրը, ուրեմն իրար նեցուկ լինելով պիտի հարգահարենք դժվարությունները, մեր երկրին նետված մարտահրավերները:

– **Պարոն Կարապետյան, արդեն ասացինք՝ տեսական ժամանակ մեր ընթերցողի հետ չեք շփվում, եւ կուզե՞նայինք իմանալ Ձեր անձնական կյանքին առնչվող որոշ հարցերի մասին նույնպես. օրինակ՝ Ձեր ընտանիքի մասին, մանավանդ որ քիչ առաջ նշեցիք՝ «Ընտանեկան ծանրաբեռնվածությունս էլ թույլ չի տա, որ ամբողջովին ու անմնացորդ լծվեմ քաղաքապետի պարտականություններին»:**

– Ավագ դուստրս գերազանցությամբ ավարտել է Երևանի բժշկական համալսարանը եւ 2015թ. ընդունվել ԱՄՆ Միչիգանի համալսարանի ռեզիդենտուրան՝ աշխատելով նույն համալսարանի կլինիկայում:

Մյուս աղջիկս նույնպես գերազանցությամբ ավարտել է Երևանի պետական համալսարանը եւ 2015թ. ընդունվել Մյունխենի համալսարանի մագիստրատուրան:

Կինս Հայաստանի ազգային պոլիտեխնիկական ինստիտուտի Կապանի մասնաճյուղի բնագիտական առարկաների եւ տեղեկատվական համակարգերի ֆակուլտետի դեկանն է, ունի տեխնիկական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան եւ դոցենտի գիտական կոչում:

Այդ ամենը ենթադրում է զնալ-գալ, հոգսեր, խնդիրներ... Այդ ամենը եւ քաղաքապետի պարտականություններին նվիրվելը, իսկապես, համատեղելի չեն:

**Ձրույցը՝ ՎԱՀՐԱՍ ՕՐԲԵԼՅԱՆԻ**

# Շահումյանի հնագիտական բացահայտությունը դեռևս պիտի հասկանալ

Էջ 1 «Թե ինչ բնույթի է այդ հուշարձանը, որը հետազայում ավերվել էր միջնադարյան բնակատեղիի կառուցման ժամանակ, այսօր դժվարանում ենք ասել, որովհետև ամիսաբար շերտ չի հայտնաբերվել: Կարող ենք միայն արձանագրել, որ այնտեղ եղել է ավելի վաղ շրջանի հուշարձան. շատ լավ կլիներ, եթե մենք գործ ունենայինք որեւէ բնակատեղիի հետ, բայց, ցավոք, որեւէ փաստ չունենք, որ կհաստատեր կամ կժխտեր մեր նախնական ենթադրությունը», – նշեց հնագետը եւ հավելեց, որ դրա փոխարեն երկրորդ տեղամասում բացվեց մի քանի հիմնահողային դամբարան, որ, ցավոք, միջնադարյան կիովին ավերված էր: Դամբարաններից մեկում գտնվեց մի ամբողջական աճուրդ, որ բնորոշ է Ք.ա. առաջին հազարամյակի առաջին բաժնի: Ք.ա 8-7-րդ դարերին, ինչ-ինչ կարելի է ենթադրել, որ ամենայն հավանականությամբ այստեղ էլ էր տարածվել դամբարանադաշտ:

Արտակ Գնունու տեղեկացմամբ՝ հիմնական հետազոտությունները ծավալվել են չորրորդ տեղամասում, որը, առաջին հայացքից, թերևս, հետաքրքիր ոչինչ չէր խոստանում: Այդտեղ բացվեցին դամբարաններ, որոնք գուրկ էին վերագտնված նշաններից, քանի որ այդ հատվածը թաղված էր հողի բավականաչափ հզոր շերտի տակ, որ առաջացել էր հետազայում սողանքի հետևանքով եւ ուներ 0,5-1 մետր խորություն:

«Այդտեղ բավականին բարդ խառնուրդ կատարվեց. հողածածկույթն ամբողջությամբ հեռացվեց, եւ բացվեց բավականաչափ ընդարձակ դամբարանադաշտ, որտեղ հետազոտվեց ութ դամբարան: Դամբարանները հիմնականում մետաղի առեւիքի քանակը. բավականին լավ պահպանված ու մշակված մետաղական իրեր՝ զարդեր, զեմք, գոտիներ, զրահի տարրեր: Չնայած տարօրինակ կլիներ, եթե հանքավայրի տարածքում նմանատիպ իրեր չհայտնաբերվեին», – նշեց Ա.Գնունին:

Չորրորդ տեղամասի յուրաքանչյուր դամբարանում հայտնաբերվեց 6-7 զանգվածով ավարանջան. ըստ հետազոտողների՝ այդ ժամանակաշրջանում դրանք օգտագործվել են որպես վճարման միջոց: Ավարանջանների երկրորդ առանձնահատկությունն այն է, որ դրանք արվեստի հրաշալի գործեր են: Այդ տեղամասի հիմնգերբոր դամբարանից գտնվել են ունեյի, տարբեր չափերի բազմաթիվ կոճակներ, որոշները՝ զարդարված, որոնք սովորաբար կարվում էին կաշվե գրա-

հաշապիկին, ինչպես նաեւ երկու գոտի, ցավոք, անզարդ: «Դետաքրքիր է, որ այսքանով համոզե՞ր՞ զեմք քիչ է հայտնաբերվել, ընդամենը երկու դաշույն: Բայց այս դամբարանադաշտում հետաքրքիր էր եւս մի համաձայնություն. այն սահմանափակված էր պատշարով. փաստորեն այդ հարթակը ինչ-որ կերպ առանձնանում էր մնացած հատվածից: Չեն կարող ասել՝ մնացած հատվածը բնակավայր էր, թե՞ դամբարանադաշտի այլ հատված», – հավելեց հնագետը: Դամբարանները տեղադրված էին շատ խիտ, բառացիորեն իրար վրա: Դետաքրքիր էին նաեւ դամբարաններից գատ գտնվող հարթակները՝ երբեմն քարով շարված, որտեղ կատարվել էին որոշակի ծիսակատարություններ: Այդ հարթակների թվում պետք է առանձնացնել N4 հարթակը, որն ի սկզբանե պեղեցին որպես դամբարան, բայց հետագայում պարզվեց, որ դա հարթակ է, որտեղ կային նվիրաբերության մեծ թվով հետքեր, սակայն ոսկրաբանական նյութ՝ ոչ մարդկային, ոչ կենդանական, չի հայտնաբերվել:

Թեպետ այդ հատվածը խաթարված էր, բայց մասնագետները համոզված են, որ դա հարթակ է. այս ժամանակաշրջանում եւ այդ դամբարանադաշտում ոսկրաբանական նյութը հատակին է գտնվել:

Դարթակների կառուցվածքի մասին որոշակի պատկերացում հնարավոր եղավ կազմել, երբ հետազոտեց հիմնգերբոր դամբարանը, որին կից գտնվող մի քանակույտ կար, որ արտաքինապես դամբարան էր հիշեցնում, ճիշտ է, շատ ավելի փոքր, մոտ 1-1.5մ: Բացելուց հետո պարզվեց, որ այն ընդամենը աղեղնածե պատ էր, որի կողք դրվել էին նվիրաբերություններ՝ երկու կավանոթ, մեկ-երկու ապարանջան, մեկ մատանի: «Դազիվ թե դա վերաբերեր հիմնգերբոր դամբարանին, քանի որ շերտագրորեն գտնվում էր դրանից մոտ 20սմ բարձր, թեպետ բացառելի չի կարելի, որ այն հիմնգերբոր դամբարանի կառուցվելուց հետո է կառուցվել: Ամենայն հավանականությամբ նվիրաբերություն կատարելուց հետո տարածքը ծածկվել է քարերով», – տեղեկացրեց արշավախմբի ղեկավարը:

N7 եւ 8 դամբարաններում հայտնաբերվել են դաշույններ, եւ այս դամբարաններն աչքի էին ընկնում մի քանի առանձնահատկությամբ: Նախ՝ դրանք նախորդներից մեծ էին մոտ 30սմ-ով, երկրորդ՝ եթե նախորդներում մարդաբանական նյութը շատ լավ էր պահպանված, այսինքն՝ հողի հատկությունները նպաստում էին դրան, ապա այստեղ մարդաբանական նյութը գրեթե բացակայում էր եւ ներկայացված էր մեկ-երկու ոսկրների բեկորներով (վերջույթներ), որ մասնագետներին հնարավորություն է տալիս ենթադրել, որ այդտեղ որոշակի ծեսեր են եղել: Իհարկե, ոչ բոլոր դամբարաններն ունենին նախանուտք կամ



Արշավախմբի ղեկավար Արտակ Գնունին

դրոմոս, որտեղ դրվում էր ննջեցյալի դիակը. եթե դրոմոսների հիմնական մասը ծածկված չէր, ապա N8 դամբարանի դրոմոսը ծածկված էր հսկայական քարաբեկորներով: Ինչ վերաբերում է դամբարանի ծածկին, ապա այն «կեղծ թաղ» եղանակով էր իրականացվում: N8 դամբարանում նույնպես ծածկված էր նաեւ նախանուտքը:

Հնագետի հաղորդմամբ՝ հատկապես աչքի էր ընկնում հիմնգերբոր տեղամասի երրորդ դամբարանը, որ առանձնանում էր իր կառուցվածքով: «Ի սկզբանե կարծեցինք, թե գործ ունենք երկու դամբարանի հետ, սակայն բացելուց հետո պարզվեց, որ դամբարանի վրա կառուցված է կիսակլոր աշտարակածե հարթակ-գոհարան, որի վրա կատարվել են նվիրաբերություններ: Ընդհանրապես այստեղ թաղման ծեսն այնպիսին էր, որ նվիրաբերությունները դրվում էին ծածկասալերին, որոնք ծառայում էին որպես գոհաբերության հարթակներ: Հիմնականում հայտնաբերվեցին անոթների բեկորներ. դրանք կտորում էին դամբարաններին», – նշեց Արտակ Գնունին եւ հավելեց, որ հիմնգերբոր դամբարանում դրանց համար կառուցում էին առանձին աշտարակածե գոհարան: «Նմանատիպ կառույցներ, իհարկե, կան, բայց որքան ինձ հայտնի է, սա հայտնաբերվածներից ամենավաղ շրջանին պատկանողն է, ընդ որում՝ իր փաստագրված նյութով, որը համաժամանակյա է դամբարանի նյութին: Արդեն հասկանալի էր, որ այս դամբարանն առանձնահատուկ է, եւ չսխալվեցինք. ննջեցյալի կողքին դրված էին մեծ քանակությամբ իրաշալի մշակված մետաղական իրեր՝ գրեթե 100-ին հասնող: Այդպիսի հարուստ դամբարան հազվա-

դեպ է նույնիսկ ողջ Այունիքի տարածաշրջանի համար, որն աչքի է ընկնում բնական մետաղական իրերի առատությամբ», – տեղեկացրեց արշավախմբի ղեկավարը:

Հիմնականում դամբարաններում կատարվել են խմբային թաղումներ: Բայց արդյո՞ք դա գոհաբերության հետեւանք է, թե՞ պարզապես ընտանեկան թաղումներ են, չեն կարող ասել: Թեպետ չորրորդ տեղամասի վեցերորդ, հիմնգերբոր տեղամասի առաջին, երրորդ դամբարաններում առանձին անհատների մնացորդներ իրարից բաժանվում էին հողի միջնաշերտով, ինչը թույլ է տալիս ենթադրել, որ դրանք պարբերաբար թարմացվող ընտանեկան թաղումներ էին:

Շահումյանի տարածքի հետազոտման ընթացքում հայտնաբերված ոսկրաբանական նյութը հետազոտվել է ԵՊՀ հնագիտության լաբորատորիայում տաղանդավոր մարդաբան Ռուզան Սկրտչյանի ղեկավարությամբ, իսկ առանձին ոսկրների հատվածները գեներալի վերլուծության են ենթարկվել Կոպենհագենի համալսարանում, որի արդյունքները հրատարակվել են «Science» եւ «Cell» ամսագրերում:

Ի զարմանս հետազոտողների՝ պարզվեց, որ ննջեցյալներից մեկը՝ վեցերորդ դամբարանի երկրորդ ննջեցյալը, հիվանդ է եղել ժամատախտով. սա այս տարածաշրջանում հայտնաբերված ժամատախտի

ամենավաղ դրսևորումն է: Թեպետ երեք տարի է, ինչ ավարտվել են պեղումները, բայց նյութերի հետազոտումն ու վերաբնակարանում դեռևս հեռու են կատարելությունից, քանի որ դեռ շատ հարցականների պատասխաններ մասնագետները պիտի տան:

«Շահումյանում ունենք մի համայնք, որն ամենայն հավանականությամբ մասնագիտացել է մետաղագործության մեջ, որովհետև այդտեղից 8կմ հեռավորությամբ կերենում մետաղը շատ քիչ է: Այս տարածքը կարծես բնական թերակղզի լինի՝ ապահով ու շատ լավ դիրքում գտնվող, մետաղական հարուստ միջավայրում: Կարծում են՝ եթե դաշտային հետազոտություններ ծավալվեն, հետաքրքիր նյութեր կբացահայտվեն, – տեղեկացրեց Ա.Գնունին եւ հավելեց, որ դեռևս մոտ պեղաշրջանի մասին խոսք չկա. – եթե այս պահին էլ ասեն, որ շարունակենք պեղումները, ամիջապես պատրաստ են սկսել»:

Արշավախմբի ղեկավարն առանձնացրեց մի քանի հարցականներ, որոնց հնարավոր է սպառիչ պատասխան տալ նաեւ հետագա պեղումների շնորհիվ: Մասնավորապես հնագետի համար առաջնային են հետևյալ հարցերի պատասխանները՝ միջնադարյան բնակատեղիի բնույթի ու տարածման սահմանների, միջնադարյան բնակատեղիի տարածքում գոյություն ունեցող հին հուշարձանի բնույթի, երկաթեդարյան դամբարանադաշտի սահմանների բացահայտում:

Առհասարակ, օրենքի համաձայն, պեղումների իրականացումը ֆինանսավորում է տնտեսվարող սուբյեկտը, այս դեպքում՝ «Դանդի փոխ մեքսալ Կապան» ՓԲ ընկերությունը: Տարածքը պեղելուց հետո եթե խմբակայրը լայնացնելու անհրաժեշտություն չլինի, ընկերությունը դրա իրավունքն ունի, եթե իհարկե չպարզվի, որ այնտեղ ճարտարապետորեն բացառիկ նշանակության հուշարձան կա: Այդ դեպքում օրենքը որոշակի սահմանափակումներ ունի. տարածքը շահագործելիս կամ պիտի շրջանցել կառույցը, կամ էլ տեղափոխել հուշարձանն ավելի ապահով վայր:

Ինչ վերաբերում է հայտնաբերված գտածոներին, ապա դրանց հետ աշխատանքն ամբողջապես ավարտելուց հետո կհանձնվեն Կապանի երկրագիտական թանգարանին (տնօրեն՝ Գրիշա Սմբատյան): Ա.Գնունու տեղեկացմամբ՝ խեցեղենն ամբողջովին վերականգնվել է, մնացած գտածոների գրանցարանում, հաշվումը, լուսանկարումը եւ այլ հետազոտական աշխատանքներ ընթացքի մեջ են: Հնագետի կարծիքով՝ գտածոն պիտի իր գտնվելու վայրին մոտ լինի. դրանով կհարստանա մախ թաղաքի երկրագիտական թանգարանը, հետո՝ այդ տարածաշրջանի մշակութային կյանքը կաշխուժանա՝ տվյալ տարածքն ավելի գրավիչ դարձնելով:

«Պարզ է միայն մի իրողություն. մենք գործ ունենք բացառիկ հուշարձանախմբի հետ, բայց այդ բացառիկությունը պիտի հասկանանք, հետո բարձրաձայնենք: Ես դեռ շատ հեռու եմ այդ հուշարձանն ամբողջովին ընկալելուց: Ընդհանուր առմամբ Կապանի ողջ տարածաշրջանը կարող է ուսումնասիրության», – ամփոփեց գրույցը արշավախմբի ղեկավարը:

**ԱՐՄԻՆԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**



# ՍՅՈՒԶԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ.

## «Մեզ համար առաջնայինը երեխայի առողջ ապրելակերպն է, ապա՝ կրթությունն ու դաստիարակությունը»

### Նախակրթություն

«Սյունյաց երկիրը» Մեղրու մտուր-մանկապարտեզին վերջին անգամ անդրադարձել էր 2007 թվականին, այն էլ ոչ թե առանձին հրապարակումով, այլ Մեղրու ոսկու հանքավայրը շահագործող ավստրալիական «Ալբերիան Ռեսուրսիզ» ընկերության վերաբերյալ հարցազրույցի մեջ: Այդ ժամանակ օջախը գոյատևում էր նաև օտարերկրյա ընկերության համաֆինանսավորմամբ: Այս անգամ լինելով մանկապարտեզում՝ նախ հետաքրքրվեցինք նախակրթարանի ֆինանսական կացությամբ:



խատանքների գծով տեղակալ: 1987 թվականին կառուցված 280 տեղանոց մանկապարտեզ (ինչպես այն ժամանակ էին ասում՝ տիպային կառույց է) հաճախում է 200 երեխա: Մանկապարտեզ հաճախելու ցանկություն ունեցող եւս 20 երեխա դրսում է. գույքի եւ խնամքի մասին խնդիր կա լուծելու, որ նրանք էլ անհոգ մանկություն անցկացնեն իրենց տարեկիցների հետ: 2013-ին մարզպետի եւ քաղաքապետի օժանդակությամբ կրտսեր առաջին տարիքային մի խումբ էլ է բացվել: «Առավել շատ հայտեր առաջին խմբի համար էին տրված, - ասում է երիտասարդ տնօրենուհին, - մայրերը երեխային մանկապարտեզի տարիքի հասցնելուց հետո ուզում են վերադառնալ աշխատանքի: Ամենաբարձր հաճախելիությունն այդ տարիքային

խմբում է»: Մանկապարտեզում մեկ երեխայի վարձը հինգ հազար դրամ է, բայց ընդհանուր ծախսերը հասնում են 15-16 հազար դրամի, այլ կերպ ասած՝ լրավճարը եռակի գերազանցում է այն գումարը, որ հատկացնում են ծնողները: Միայն սննդի համար ծախսվում է մոտ ութ հազար դրամ: Ինչ վերաբերում է կադրերով ապահովվածությանը, նախադպրոցական տարիքի երեխաների կրթությանը եւ դաստիարակությանը կոչված այս մանկապարտեզի աշխատակազմը 46 հոգի է, որից 11-ը՝ բարձրագույն կրթությամբ, աշխատակիցներից 25-ը քսան տարուց եւ ավելի աշխատանքային ստաժ ունեն: Ինչպես ասում են՝ ավագ սերունդն ու երիտասարդությունը փոխլրացնում են միմյանց:

Հունիսին սաներից 55-ը հրաժեշտ կտա մանկապարտեզին եւ ութ կղնի դպրոցի շենին:

«Ավելի շատ կարիք ունենք ներդրումների, միայն քաղաքապետարանն է մեզ օգնում՝ ընդհուպ գրեմական պիտույքներով, շենքը ջեռուցման համակարգ չունի, խմբասենյակներում ձմռանն անհրաժեշտ ջերմություն ենք ապահովում փայտի վառարանով, վառելիքայտն էլ ծնողների միջոցով է ձեռք բերվում», - հիմնախնդիրներն է ներկայացնում Սյուզան Սարգսյանը եւ հավելում, որ առաջնայինը նախակրթարանի դահլիճի նորոգումն է, որտեղ անցկացվում են միջոցառումներ:

Զրույցին մասնակցող Մեղրու քաղաքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ Սիրուն Սարգսյանը կողքից հուշում է, որ վերջին անգամ մանկապարտեզը նորոգվել է 2001 թվականին՝ ամերիկյան «Փոկենք երեխաներին» միջազգային կազմակերպության միջոցներով, վերջին տարիներին միայն կրսմեռիկ նորոգումներ են արվել: Ի դեպ, կրթօջախին օգնության ձեռք մեկնելու մի փաստ էլ իմացանք. Հայաստանի Հանրապետությունում Միացյալ Նահանգների դեսպանատան օգնությամբ անցյալ տարվա գարնանը մանկապարտեզի տանիքին արեւային ջրատաքացուցիչ (300 լիտր տարողությամբ) է տեղադրվել, որ տաք ջրով բավարարում է խոհանոցի կարիքները: Եվս մի ծրագիր են ներկայացրել Գերմանիայի Դաշնության դեսպանատանը՝ կոշտ եւ փափուկ գույք ձեռք բերելու համար:

«Շնորհակալություն կարող են ասել շատերը, բայց քչերը կարող են շնորհակալ լինել», - ասում են մեր գրող-ցակիցները, եւ զգուս եւ վերաբերմունքը բարեբարոյների հանդեպ՝ «մեր բոլոր բարեգործներին, ովքեր փոքրին ուշադրություն են դարձում մանկապարտեզին, թեկուզ գրեմական պիտույքների տեսքով, պիտի հայտնենք մեր երախտագիտությունը»:

Հունվարին գրիպի համաճարակի հետեւանքով դպրոցներում ձմեռային արձակուրդը երկարաձգվեց: Հանրապետության կրթական համակարգը կաթվածահար էր եղել: Տեղեկանում ենք, որ հունվարին, նաեւ փետրվարին, ինչպես Մեղրու, այնպես էլ Ազարակի մանկապարտեզները հարկադիր պարապուրդի մեջ էին եւ դրանով կարողացան շրջանցել վարակիչ հիվանդության վտանգը: «Նախադպրոցական տարիքի օր-

ծնողների հետ նախաձեռնել են ստեղծելու էկոլոգիական սենյակ. «Գեղեցիկ ծրագիր է, բայց մանկապարտեզի շենքային պայմանները չեն ներում, դրան հասնելու համար որոշակի ներդրում է պահանջվում: Ծրագիրը միտված է վաղ տարիքից բնապահպանական դաստիարակության արմատավորմանը դեռահասի մեջ», - ասում է տնօրենը:

Շրջեցինք մանկապարտեզի հարկաբաժիններով: Կրտսեր առաջին խմբի (2-3 տարեկաններ) սենյակն առանձնանում էր մյուսներից իր ձեւավորմամբ: Դաստիարակչուհի էմիլյա Սարգսյանը, ով, ի դեպ, ավարտել է պետականաւսարանի սոցիոլոգիայի ֆակուլտետը, այն համոզմունքն ունի, որ հատկապես կրտսեր տարիքի սանուկները հեքիաթային մթնոլորտում պիտի մեծանան, եւ իր ծիրքն օգտագոր-



գանդովի դիմադրողականությունը թույլ է, չէինք կարող ռիսկի դիմել, ինչքան էլ բուժքույրը հետեւում է, որ գրիպով վարակված երեխա չլինի, հիվանդները գաղտնի շրջան են ունենում: Թվում է՝ առողջ վիճակում է երեխան այցելում մանկապարտեզ, բայց հիվանդությունը հետո է արտահայտվում: Մեզ համար առաջնայինը երեխայի առողջ ապրելակերպն է, ապա՝ կրթությունն ու դաստիարակությունը, եթե մանուկն անառողջ ելու, ամիսստ է խոսել վերջին երկուսի մասին», - հավաստագրում է Սյուզան Սարգսյանը եւ հավելում, որ նախադպրոցական տարիքի երեխաների հետ տարվող աշխատանքը մի քանի կարեւոր բաղադրիչներից է բաղկացած, որոնցից ոչ մեկը չպետք է ստորադասել մյուսին:

Ինչ վերաբերում է նախակրթարանի մանկավարժների մեթոդական օգնությանը, ապա պարբերաբար նրանք վերապատրաստման դասընթացների են մասնակցում Կրթության ազգային ինստիտուտի Կապանի մասնաճյուղում: Վերջին անգամ երաժիշտներն են մասնակցել, դրանից առաջ՝ տնօրենն ու դաստիարակները:

ծել է՝ խմբասենյակը երեխաներին հեքիաթների սիրելի հերոսների կերպարներով ձեւավորելու համար:

Տնօրենի աշխատասենյակում տպավորիչ մի սպորտային գավաթ կար: Աշնանը մարզկենտրոնում անցկացված Հայաստանի Հանրապետության նախագահի մրցանակի համար «Լավագույն մարզական նախադպրոցական ուսումնական հիմնարկ» մրցույթում մանկապարտեզի սաները մարզի չորս մանկապարտեզի թիմերի հետ պայքարում առաջին տեղը գրավեցին եւ ոչ միայն գավաթով պարգևատրվեցին, այլեւ իրավունք նվաճեցին մասնակցելու մրցույթի հանրապետական փուլին: Այստեղ եւս փոքրիկ մեդալներն իրենց լավագույն կողմերով են դրսևորել՝ արժանանալով ՀՀ սպորտի եւ երիտասարդության հարցերի նախարար Գարիբեյ Ղազարյանի շնորհակալագրին: Ինչպես երեւում է, մարմնակրթությունը մանկապարտեզում տեսադաշտում է, այլ կերպ ինչպե՞ս բացատրել, երբ փոքրիկներն իրենց ֆիզիկական պատրաստվածությամբ հասնում են մինչեւ մայրաքաղաք:

### ՎԱՅՐԱՍ ՕՐԲԵԼՅԱՆ

**ՎԱՏԱՌՎՈՒՄ Է** մեկ սենյականոց բնակարան Քաջարան քաղաքի Խանջյան փողոցի չորս հարկանի շենքի 3-րդ հարկում: Ցանկացողները զանգահարեն 091 98 40 95 հեռախոսահամարով:

## Մեկ ժամ պոեզիայի հետ

### Մշակույթ

17-րդ տարին է, ինչ ՅՈՒՆԵՍԿՕ-ի հռչակմամբ ամբողջ աշխարհում նշվում է պոեզիայի օրը: «Պոեզիան կարող է պատասխան լինել ժամանակակից մարդու առաջ ծառայած ամենաբարդ հոգեւոր խնդիրներին, սակայն դրա համար անհրաժեշտ է պոեզիայի վրա բեւեռել հասարակության հնարավորին չափ լայն շերտերի ուշադրությունը», - ուշված է կազմակերպության որոշման մեջ:

Սյունիքի մարզային գրադարանը եւս անդրադարձավ պոեզիայի միջազգային օրվան: Գրադարանի արվեստի բաժինը կազմակերպեց «Պոեզիայի ժամ. Սուրեն Քոչարյան եւ...» խորագրով երեկո: Արվեստի բաժնի վարիչ Ելենա Լալազարյանը ներկայացրեց օրվա խորհուրդը,

հայ պոեզիայի անցած ճանապարհին ու նրա երեւելի դեմքերին: Ցերեկույթի ընթացքում, մասնավորապես, առավել շատ տեղ էր հատկացվել նրանց, ովքեր պոեզիան հնչեցրել են բեմահարթակներից, հեռուստատեսությամբ ու ռադիոյով:

Ժողովրդական արտիստ Սուրեն Քոչարյանը ստեղծագործական գործունեությունը սկսեց որպես դերասան Սուրենուկյանի անվան դրամատիկական թատրոնում, այնուհետեւ ամբողջությամբ նվիրվեց ասմունքի արվեստին: Նրա նախասիրությունը գրական նշանավոր երկերի ասմունքն էր, որի գերիշխող հնչերանգը պատմողականն է եղել, գլխավոր սկզբունքը՝ կերպարների անձնավորումը՝ հնչող խոսքի եւ դիմախառնի միջոցով: Երեկոյի մասնակիցները հաղորդակից եղան նրա անզուգական կատարմանը Հ.Թունյանի «Բարեկեղանը», «Գիքորը» եւ «Լուռեցի Սաքոն»: Այնուհետեւ հնչեցին ճանաչված մյուս ասմունքողների կատարումները Սուսաննա Գաբրիելյան, Վլադիմիր Աբաջյան, Սիլվա Յուզբաշյան: Եկրանից հնչեց Պարույր Սեւակի կենդանի խոսքի ձայնագրությունը. բանաստեղծը կարողաց իր ստեղծագործություններից՝ «Ապրել» եւ «Ես քեզ սպասում եմ»: Երեկոյի ընթացքում ներկայացվեցին հայ բեմարվեստի նշանավոր

ներին, ովքեր նաեւ մեծ ոգեղենությամբ ու արվեստով ասմունքել են՝ Սիեր Մկրտչյան, Սոս Սարգսյան, Խորեն Աբրահամյան:

Բանաստեղծությունն ու երաժշտությունը միշտ կողք կողքի են եղել: Կապանի մանկապատանեկան ստեղծագործության կենտրոնի երգեցողության բաժնի դասատու Թերեզա Հովհաննիսյանը հնչեցրեց Զարեցի «Ես իմ անուշ Հայաստանի» բանաստեղծության բառերով գրված երգը (երաժշտությունը՝ Աշոտ Սաթյանի): Նաեւ ասմունքեց Շիրազի «Մարգարիտն ու փրփուրը» չափածո առակը:

Կապանի Ալ.Շիրվանզադեի անվան պետաբարոնի գեղարվեստական դեկավար Արթուր Գաբրիելյանը նշեց, որ խորհրդային տարիներին ասմունքը լայն տարածում գտավ եւ թափ առավ, ու մի դերասանական սերունդ առանձնացավ թատրոն տեսարանի դարձավ զուտ ասմունքող (Վլադիմիր Աբաջյան, Արթուր Ութմազյան եւ ուրիշներ):

Վերջում շնորհակալություն հայտնվեց արվեստի բաժնին պոեզիայի աշխարհին հաղորդակից դարձնելու եւ դրանով հոգսաշատ առօրյայից կտրվելու հնարավորություն ընձեռնելու համար:

### ՎԱՅՐԱՍ ՕՐԲԵԼՅԱՆ

## Այունյաց երկիր

ՀԻՄՆԱԳԻՐ ԵՎ ՀԻՄՆԱՐԱՎԿԻՉ «ՅՈՒՆԵՍԱՍ ԱՆԽԱՐԳ»

ՍԱՀՄԱՆԱԾԱԿ ՊԱՏԱՆԱՆՏՎՈՒԹՅԱԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Գլխավոր խմբագիր՝ **ՍԱՍՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ**

Հասցե՝ Կապան, Շահումյան 20/32:  
Հեռ.՝ (0285) 5 25 63, (091) 45 90 47, (077) 45 90 47:

Էլ. փոստ՝ syuniacyerker@mail.ru  
Էլ. կայք՝ www.syuniacyerker.am

Թղթակցությունները չեն գրախոսվում եւ հեղինակներին չեն վերադարձվում: Խմբագրության եւ հեղինակների կարծիքները կարող են չհամընկնել: Նյութերը ներկայացնել մեքենագիր վիճակում (3 մեքենագիր էջից ոչ ավելի):

«ԳՈՎԱԶԴ - ԾԱՆՈՒՑՈՒՄ» բաժնուտ տպագրվող նյութերի համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

Հղումը «Այունյաց երկրին» պարտադիր է:

ՌՆՄԱՆՈՒՄ ԳՐԱԳՐԱԿԱՆ ԵՆ ԳՈՎԱԶԳՅԱՆ ՆՅՈՒՅԵՐ: Գրանցման վկայականը՝ 01Մ 000231: Թերթը տպագրվում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում: Հասցեն՝ ք. Երևան, Արշակունյաց 2: Պետական աջակցություն՝ տարեկան 500000 ՀՀ դրամ:

Ծավալը՝ 2 տպագրական մամուլ: Տպաքանակը՝ 1720, գինը՝ 100 դրամ: Ստորագրված է տպագրության 31.03.2016թ.: